



ՀՈԳԵԳԱՂՈՒՄՏԵՆ ԵՏԲ ԵՐՐՈՐԴ ԿՐՐԱԿՐ

25 ՅՈՒՆԻՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
«Ուխտին Տապանակը» (30)	Էջ 3
Ծանուցում	Էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(1.2-15)

**Լ**սէ՛, ո՛վ երկիրնք, ահա՛նջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզը զինք պահողը կը ճանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ իր Տէրը չի ճանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն զաւակներ: Լքեցիք Տէրը, բարկացուցիք Իսրայէլի Սուրբը, օտարացաք եւ կոնակ դարձուցիք: Չի՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ էք գլխովին եւ տրտում էք սրտովին. վէրքով, ուռեցքով ու թարախալից պալարներով ծածկուած էք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձէթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը: Սիոնի դուստրը՝ Երուսաղէմը միայն

մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կուլթէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին: Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմի կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլայինք: Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Սողոմի իշխաններ, Աստուծոյ օրէնքներուն ահանջ տուէք, ո՛վ Գոմորի ժողովուրդ. այսպէս կ'ըսէ Տէրը.

«Ի՞նչ կ'արժեն ինծի ձեր բազմաթիւ զոհերը. ա՛լ զգուեցայ ձեր խոյերու ողջակէզներէն եւ պարարտ անասուններու ճարպէն: Չեմ ուզեր գառնուկներու, ցուլերու եւ նոխազներու արիւնը: Ո՞վ պահանջեց ձեզմէ այս բաները, իմ ներկայութեանս գալու համար. ո՞վ ուզեց որ այդպէս ոտք կոխէք իմ գաւիթներէս ներս: Զուր տեղ նուէրներ մի՛ բերէք ինծի այլեւս. ձեր ծխած խունկը պիղծ է ինծի համար: Չեմ կրնար տանիլ նորալուսնի նուիրած ձեր տօները, Շաբաթներն ու կրօնական հաւաքոյթները. ձեր տօնախմբութիւնն իսկ անօրէնութիւն է: Կ'ատեմ ձեր նորալուսնի եւ այլ տօները. զգուած եմ ձեզմէ, ա՛լ պիտի չներեմ ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար ձեր ձեռքերը բարձրացնէք՝ պիտի չնայիմ ձեզի. նոյնիսկ եթէ ձեր աղօթքները բազմացնէք՝ պիտի չլսեմ ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով ծածկուած են»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԷՆ  
(6.12-23)

**Ա**յսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հնազանդեցնելով: Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք

... ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք:

դարձնելով, այլ որպէս մահու ընէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք է իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք, թէ որո՛ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհուի՛ր՝ Աստուծոյ, որ թէպէտ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզի աւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք: Երբ մեղքին ծառան էիք, հեռու էիք արդարութենէն: Ի՞նչ շահեցաք այն ժամանակուան ձեր

գործերէն, որոնցմէ կ'ամչնաք հիմա. որովհետեւ անոնց հետեւանքը մահ է: Բայց հիմա մեղքին տիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաներն էք: Ձեր շահը սրբութեան նուիրուած կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտենական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ  
ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(12.1-8)

**Շ**աբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր:

Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը որ արգիւտուած է Շաբաթ օրով ընել»: Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան: Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը սակայն ատիկա մեղք

չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. “Ողորմութիւն կ'ըզգեմ եւ ոչ թէ գոհ”, այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»:

# «ՈՒԽՏԻՆ ՏԱՊԱՆԱԿԸ»

ԿՐԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ  
ՄԻՍԷ ԱՆԹՐԻԱՍ  
ՓՈՒՆԱԴՐՈՒԹԻՒՄ

ԳԱՐԵԿ Ա. Ք. Գ.

«ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԹՈՒԱԿԱՆ»ԷՆ  
ԿԻԼԻԿԻՈՅ ԱՂԵՏՐ

5

Օսմանեան Կայսրութեան սահմանները արդէն երկու դարէ «անընդհատական կրճատում»ի մէջ էին, հարուածներուն տակ՝ «երկրին գլխէն, ոտքէն, կողերէն, չորս դիէն»<sup>423</sup>: Եւ այն կրճատումը հասած էր Մակեդոնիա, ուր տագնապը ծայրայեղ բորբոքած էր:

Պետութիւններու, մասնաւորապէս Անգլիոյ եւ Ռուսիոյ միջամտութիւնները յանկարծ բուռն կերպարանք էին առած, եւ հորիզոնին վրայ կը նշմարուէր Մակեդոնիոյ անջատման եւ Թուրքիոյ նոր անդամահատման հեռանկարը<sup>424</sup>:

Կայսրութիւնը վերջնական անկումէ ազատելու համար՝ Փարիզի խորհրդաժողովին որոշումները արագօրէն տարածուած էին սպաներու եւ ուսեալ ու մտաւորական շրջանակներու մէջ՝ «ցանկալի տպաւորութիւն» ձգելով, մանաւանդ՝ խորհրդաժողովին վճիռը. գահընկեցութիւն Սուլթան Համիտի<sup>425</sup>:

Փարիզեան խորհրդաժողովէն քանի մը ամիս անցած էր, երբ Մակեդոնիոյ թուրք բանակը ապստամբութեան դրօշը պարզեց եւ քաղեց Կ. Պոլսոյ վրայ: Սուլթանը պարտաւորուած՝ «անուշ ժպիտով» Միթհատեան Սահմանադրութիւնը հռչակեց եւ ուխտեց հաւատարիմ մնալ անոր<sup>426</sup>:

Ապստամբութիւնը յաղթական էր: Իթիթհատը՝ իշխանութեան գլուխ: Եւ Օսմանեան Կայսրութիւնը դարձած էր Սահմանադրական միապետութիւն մը: Երիտասարդ թուրքերը հրաժարած էին սուլթանը գահընկեց ընելու վճիռէն<sup>427</sup>: Քիչ անց ալ՝ կը հրապարակէին քաղաքական իրենց ծրագրերը, որ գրեթէ կը կրկնէր Միթհատի գաղափարները:

Անոր մէջ կը նշուէր, թէ սուլթանը ծայրագոյն խալիֆն է Կայսրութեան, թէ ան ենթակայ չէ պատասխանատուութեան ու անձեռնմխելի է<sup>428</sup>: Իսկ քաղաքացիներն ալ առանց խտրութեան օսմանցիներ են<sup>429</sup>: Տասնամեակներու մեծագոյն տառապանքին, մարտնչումին, զոհաբերումին «օրհնեալ արգասիք»ը ա՛յս էր<sup>430</sup>:

Սահմանադրութեան վերահաստատման առաջին օրերուն՝ «տարբերութիւն չէր մնացած ոչ ոքի միջեւ. ամէն դասակարգի, ամէն սեռի, ամէն հասակի, դիրքի ու պաշտօնի անձնաւորութիւն հարբած մոգական հուրիէթ, ատալաթ, մուսավաթ խօսքերէն՝ իր զգացմունքը թափելու պարտականութեան մէջ կը գտնուէր. մին պարելով, միւսը՝ լալով, մին գոռալով, միւսը՝ հրացան պարպելով, ոմանք ճառելով, ոմանք գինիի եւ օղիի սրուակները ձեռին փողոցները շրջապայելով եւ հարայ-հոռոց հանելով: Երկիրը աւելի շատ խենթանոցի էր նման», ինչպէս նկարագրած է Ռուբէն Տէր Մինասեան<sup>431</sup>:

Ահա կը յայտարարուէր. «Այլեւս չկայ թուրքի, հայու, յոյնի եւ հրէի տարբերութիւն. ամէնքս ալ մէկ եղբայր ենք, ամէնքս ալ մէկ հայրենիքի կը ծառայենք, ամէնքս ալ մէկ դրօշի ներքեւ կը գտնուինք»<sup>432</sup>: Ամէնքն ալ Օսմանցի էին... Ու ի շարս այլոց կը գրուէր նաեւ այս ոտանաւորը. «Եղբայր ենք մենք, մէկ սիրտ, մէկ կամք, մէկ հոգի. / Մեր սիրոյն մէջ տեղի չենք տար ո՛չ ոքի: / Խաղաղութեան դրօշին տակ լուսափառ, / Ունինք մենք նո՛յն զգացում, պահանջ ու բարբառ: / — ՕՍՄԱՆՑԻ՛. / Ա՛յս մեր անունն, որուն աշխարհ նախանձի»<sup>433</sup>:

Մինչ Կայսրութեան փոքրամասնութիւնները եւ անոնց մէջ հայերը տակաւին հարբած էին, Իթիթհատի «Թան» պարբերականը պիտի գրէր. «Թուրքեր իրենց աշխարհակալի հանգամանքով՝ ունին որոշ իրաւունքներ եւ մենաշնորհներ. կարիք չկայ միւս ցեղերուն համար ճանչնալ նոյն քաղաքական հաւասարութիւնը»<sup>434</sup>:

Վարանդեան գրած է, թէ Իթիթհատը իւրացուցեր էր վատթարագոյն ազգայնամոլութեան հաւատամքը եւ կը ձգտէր ձուլել բոլոր ցեղերը օսմանցիութեան մէջ, ստեղծել օսմանեան Կայսրութեանն ոչ միայն մէկ պետութիւն, այլեւ մէկ ազգ — օսմանեան ազգը<sup>435</sup>:

Անիկա կուսակցական բռնատիրութիւն էր հաստատած: Սուլթանին ձեռքերը կարճուցած, եւ վարչական բարձր պաշտօններու վրայ նշանակած իր կուսակցութեան անդամները: Գաւառներու կուսակալներ, միւլթէսարըֆներ եւ գայմագամներ՝ մեծամասնութեամբ իր անդամներն էին: Մարդիկ փութացած էին Իթիթհատական ըլլալ՝ պաշտօններ ձեռք ձգելու համար: Կարեւոր քաղաքներու մէջ «թունաւոր սունկի նման» բուսած էին Իթիթհատական ակումբներ<sup>436</sup>: Ըստ Ռուբէնի, Իթիթհատը ժողովրդական յենարան ունենալու համար

խրախուսած էր իր շարքերուն մէջ մուտքը այն տարրերուն, որոնք ազդեցիկ էին, հարուստ էին, ֆիզիքապէս ոյժ ունէին եւ կը ձգտէին պետութեան ճամբով իրենց շահատակութիւնները ի գործ դնելու: Այս տարրերէն կազմուած էին իթթիհատի կոմիտէները<sup>437</sup>, որոնք շատ շուտ վոհմակներու փոխուած էին:

Միսաք Գօչունեան Սահմանադրական վոհմակներուն ի տես՝ իր յուսախաբութիւնը յայտնած է, ըսելով թէ՛ նոր լողունգը պահ մը յոյս ներշնչեց գիւղացիին եւ քաղաքացիին, որ հին վարչակարգը պիտի ջնջուի, հարուածողները, հարստահարողները կորաքամակ պիտի մնան եւ երկրին ծառայելու կամք ու կոչում ունեցող ուղղամիտ ու արդարադատ քաղաքացիներ միայն պիտի ստանձնեն վարչութիւնը: Սակայն դարձեալ «հին անսիրտ կեղեքողներ, ու արիւն ձոնողներ» (ասոր ներքեւ դժուար չէ հասկնալ՝ հին անսրտութեան, կեղեքողականութեան եւ արիւնկզակութեան ոգիով նորերը) կը տիրապետեն<sup>438</sup>:

Իթթիհատի իշխանութեան առաջին 8-9 ամիսները յատկանշուեցան պաղ անտարբերութեամբ մը՝ դէպի ոչ-թուրք ազգերու կենսական պահանջները<sup>439</sup>: Այս պաղ անտարբերութիւնը «միտերալթեան սիսթեմ» պիտի կոչէր Երուանդ Սրմաքէշխանլեան: Ահա թէ ինչպէս. «Ա՛խ, այդ սարսափելի միտերը, որ տարիներով իր տակը առած ձգմած է միլիոնաւոր ժողովուրդներ ամէն ցեղէ եւ կրօնքէ, իսլամը եւ ոչ-իսլամը հաւասարապէս (...) Համիտի օրով, միտերալթեան սիսթեմը իր իտէյալ կատարելութեանը հասաւ: Չարիքին մեծ վարպետը (...) իր ամենէն յետին պաշտօնեային իսկ տուաւ լաւագոյն միտերները, որոնց վրայ երբեք նստած ըլլային այդքան հանգստաւէտօրէն Օսմանեան Կայսրութեան բոլոր մեծ ու պատիկ պաշտօնատարները (...) սահմանադրական ռեֆորմին հաստատումէն յետոյ՝ միտերալթեան դրութիւնը ի սպառ քանդուեցա՞ւ: Ո՛չ, դժբախտաբար (...) միտերը ալթըրի մահաբեր դրութիւնը դեռ լայնօրէն կը թագաւորէ այս երկրին մեծագոյն մասին մէջ»<sup>440</sup>:

Այս միջոցին սուլթանը երկու ջուրերու մէջ կը լողար. մէկ կողմէ Սահմանադրասէր էր, միւս կողմէ՝ սատանայական միջոցներ կ'որոճար՝ այս անգամ եւս տապալելու ստիպողաբար վերահաստատածը:

Ան գաղտնօրէն ստեղծեց կրօնամոլ «Մուհամմէտիէ» կուսակցութիւնը, ուր հաւաքուեցան նախկին փաշաներ, պէյեր, պաշտօնագուրկ լրտեսներ, զինուորականներ, եւ այլք՝ որոնք կրցած էին պահել իրենց դիրքերը՝ զիրենք փոխարինողներու պակասին հետեւանքով<sup>441</sup>: Ան իր կողքին ունէր նաեւ մոլլաները<sup>442</sup>:

Սուլթանը ամիսներ ուսումնասիրեց եւ կազմակերպեց յեղաշրջումը, որ 31 Մարտին պիտի փորձուէր<sup>443</sup>: Իթթիհատականները դուրս քշուեցան կառավարութենէն եւ սուլթանը կարճ ժամանակ

մը միահեծանութիւն վայելեց: Շուտով սակայն դահընկեց եղաւ եւ աքսորուեցաւ Թեսաղոնիկէ, ուր տարիներ յետոյ մեռաւ «այդ ծնեալ ոճրագործը»<sup>444</sup>:

Անոր աքսորը փրկութիւն մը չեղաւ, քանի իրավիճակը այնպիսին էր, որ կանխաւ տեսնուեցաւ թէ՛ «նորէն մարդ պիտի խողխողեն այս երկրին մէջ»<sup>445</sup>:

(Շարունակելի 30)

#### Ա.Ղ.ԲԻԻՐՆԵՐ ԵՎ ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

402.- Մանուկ Գ. ձիգվէնեան, Պատմութիւն Ամերիկահայ Քաղաքական Կուսակցութեանց/1890-1925, Ֆրէզնօ, 1930, է 134, ձԱԿ:

403.- Անդ:

404.- Այն յուսախաբութիւնը յստակօրէն բանաձեւուած է Դրօշակի խմբագրականին մէջ, որ վերնագրուած է՝ «Յաւիտեանական Խարխալումներ», Մարտ 1902, է 34: Ահաւասիկ. «Ուշագրաւ է եւ միանգամայն ըմբոստացուցիչ՝ թէ ինչպէս օսմանեան լիբերալիզմի շիտակ ու արդարամիտ հոչակուած ներկայացուցիչներն անգամ գարտուղի նանապարհներով, մանուածապատ դարձուածներով նգնում էին ձուլել «ընդհանուր ռէֆօրմների» կամ Միթիստական մեռելածին «Սահմանադրութեան» մէջ ուրոյն ժողովրդային մի դատ, որ սրբագործուած է միջազգային դաշնագիրներով եւ հարիւր հազարաւոր գոհերի արիւնով»:

405.- KAG, է 28-29:

406.- Stefano Taglia, The intellectual's dilemma : the writings of Ahmet Riza and Mehmet Sabahettin on reform and the future of the Ottoman Empire, PhD thesis, University of London, 2012, է 257, TID:

407.- Դարձեալ՝ KAG, է 28-29:

408.- ձԱԿ, է 135:

409.- TID, է 258:

410.- KAG, է 29:

411.- Ն, է 36:

412.- Ն, է 37:

413.- Անդ:

414.- SHOT, է 264:

415.- Ն, է 265:

416.- KAG, է 37:

417.- ՎԴՊ2, է է 5-6: Կ. Զ. Թառոյեան, Երիտօրութեան Խարդավանները Հայ Ազատագրական Զգտումների Դէմ, Լրաբեր, թիւ 1, 2005, է 211: Ն. Մ. Մարտիրոսեան, 1908 Թ. Երիտօրութեան Յեղաշրջումը Եւ Խորհրդարանի Չեւաւորումը Օսմանեան Կայսրութիւնում, Լրաբեր, թիւ 1, 2014, է 87:

418.- ձԱԿ, է 132:

419.- Ն, է 133:

420.- ՎԴՊ2, է 6:

421.- Ն, է 10:

422.- Ն, է 14:

ՀՈԳԵՆԱԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԱՆԽՕՐՕՔ ԿՁՏԱՐԵՅԷՔ ԿԱՊՈՒԷԼՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՂ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ: